1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Կատարողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Համաձայնագրով նախատեսված Բաժանորդագրման ծառայություններ/Լրատվամիջոցների բաժանորդագրություն (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ծառայությունների գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունների արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ծառայությունների տեխնիկական բնութագիրը սահմանված է Պայմանագրով:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3 228 200 (երեք միլիոն երկու հարյուր քսանութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն Կատարած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 4.2 և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | "Պրես Ստենդ" ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Արշակունյաց 2 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Անելիք Բանկ» ՓԲԸ, |
| Հ/Հ 900011117034 | Հ/Հ 1180007179180 |
| ՀՎՀՀ 02703824 | ՀՎՀՀ 02703369 |
| ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետ ՊժԿ | Տնօրեն |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Է. ԽԱՆԶԱԴՅԱՆ |

*Հավելված N 1*
*N ԳՀԾՁԲ-12/1-1 պայմանագրին կից*
*1 Համաձայնագրի*

## Ծառայությունների գնման ժամանակացույց

| Հ/հ | Ծառայության անվանումը | Չ/մ | Քանակ | Միավորի գինը/դրամ/ | Ընդհանուր գին | Գնման ժամանակացույց |
|---|---|---|---|---|---|---|
| | **Բաժանորդագրման ծառայություններ/Լրատվամիջոցների բաժանորդագրություն/ այդ թվում*** | դրամ | 1 | | 3228200 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 1 | Ազգ թերթ | հատ | 30 | 8700 | 261000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 2 | Հայոց աշխարհ թերթ | հատ | 12 | 31500 | 378000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 3 | Հայկական ժամանակ թերթ | հատ | 5 | 42000 | 210000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 4 | Առավոտ թերթ | հատ | 8 | 42000 | 336000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 5 | Չորրորդ իշխանություն թերթ | հատ | 4 | 42000 | 168000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 6 | Ռեսպուբլիկա Արմենիյա թերթ | հատ | 6 | 8700 | 52200 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 7 | Գոլոս Արմենիի թերթ | հատ | 18 | 19500 | 351000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 8 | Նովոյե վրեմյա թերթ | հատ | 7 | 19500 | 136500 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 9 | Կրասնայա զվեզդա թերթ | հատ | 4 | 58500 | 234000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 10 | Նեզավիսիմոյե վոյեննոյե օբոզրենիե թերթ | հատ | 7 | 23400 | 163800 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 11 | Տեխնիկա ի վոորուժենիյե ամսագիր | հատ | 2 | 35000 | 70000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 12 | Վոեննայա միսլ թերթ | հատ | 6 | 28000 | 168000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 13 | Հայ շինարարի տեղեկագիր թերթ | հատ | 1 | 20000 | 20000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 14 | Զարուբեժնոյե վոյեննոյե օբոզրենիե թերթ | հատ | 12 | 21000 | 252000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 15 | Ռադիո ամսագիր | հատ | 2 | 26000 | 52000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 16 | Ժողովուրդ թերթ | հատ | 5 | 21000 | 105000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 17 | Կրթություն թերթ | հատ | 4 | 8675 | 34700 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 18 | Ավիացիա ի կոսմոնավտիկա ամսագիր | հատ | 2 | 34000 | 68000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 19 | Օրիենտիր ամսագիր | հատ | 1 | 14000 | 14000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 20 | 21-րդ դար ամսագիր | հատ | 1 | 30000 | 30000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 21 | Քրիստոնյա Հայաստան թերթ | հատ | 28 | 3000 | 84000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |
| 22 | Արմեյսկի սբոռնիկ ամսագիր | հատ | 1 | 40000 | 40000 | 2018թ. 1-4 եռամսյակներ, ոչ ուշ, քան 05.12.2018թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

"Պրես Ստենդ" ՍՊԸ

տնօրեն

Է. ԽԱՆՁԱԴՅԱՆ

*Հավելված N 2*
*N ԳՀԾՁԲ-12/1-1 պայմանագրին կից*
*N 1 Համաձայնագրի*

Ծառայությունների վճարման ժամանակացույց

ՀՀ դրամ

| Հ/հ | Ծառայության անվանումը | Համաձայնագրի գին /ՀՀ դրամ/ | Վճարումը կիրականացվի 2018թ. համապատասխան ամիսներին, ընդ որում՝ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ |
| 1 | **Բաժանորդագրման ծառայություններ/Լրատվամիջոցների բաժանորդագրություն/** | 3228200 | 807050 | 1614100 | 1614100 | 1614100 | 2421150 | 2421150 | 2421150 | 3228200 | 3228200 | 3228200 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

Միջանցիկ կոդ՝ ըստ CPV դասակարգման՝ 79981100/321/10/1

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԻ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

"Պրես Ստենդ" ՍՊԸ

տնօրեն
Է. ԽԱՆՋՅԱՆ

## ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ԳՀԾՁԲ-12/1-1

ք. Երևան 23.01.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և "Պրես Ստենդ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Է. Խանզադյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության

իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3 712 920 (երեք միլիոն յոթ հարյուր տասներկու հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Գնորդը պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ

գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչությունը:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ պաշտպանության նախարարություն** | **"Պրես Ստենդ" ՍՊԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Արշակունյաց 2 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Անելիք Բանկ» ՓԲԸ, |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1180007179180 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 02703369 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊՖԿ | Տնօրեն |
| ԱՐԱՊԵՏՅԱՆ | Է. ԽԱՆՋԱՂՅԱՆ |

**Հավելված N 1**
**N ԳՀԾՁԲ-12/1-1 պայմանագրի**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Չ/Հ | Ծառայության անվանում | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|
| | | Բաժանորդագրման ծառայություններ/Լրատվամիջոցների բաժանորդագրություն | |
| 1 | 3 | Ազգ թերթ | Թերթերը և ամսագրերը առաքվելու են ՀՀ պաշտպանության նախարարություն և ՀՀ տարածքում տեղակայված զորամասեր՝ ըստ նախապես ներկայացված հայտերի: Երևան քաղաքում կատարվող առաքումները պետք է իրականացվեն մինչև առավոտյան ժամը 9:00-ն, իսկ մյուս վայրերում գտնվող զորամասեր կատարվելիք առաքումները՝ օրվա ընթացքում/:<br><br>Հանձնվում են պատասխանատուի կողմից որոշված ստացողին/:<br><br>Առանձին թերթերի և ամսագրերի խմբագրությունների աշխատանքի դադարեցման կամ արձակուրդի դեպքում երկու օրվա ընթացքում հայտնել պատվիրատուին:<br><br>Առաքման փաթեթների կազմումն իրականացնել Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո միայն:<br><br>Առաքվող փաթեթների բեռնագրերի վրա անհրաժեշտության դեպքում կատարվող փոփոխությունները պետք է հաստատվեն պատասխանատու անձի ստորագրությամբ:<br><br>Փաթեթները պետք է առաքվեն փաթեթավորված, փակ վիճակում, տրանսպորտային բեռնագրերը պետք է լինեն համապատասխան կարգով կնքված և ստորագրված:<br><br>Յուրաքանչյուր եռամսյակի վերջում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացվի թերթերի և ամսագրերի առաքման և բաժանորդագրության վերաբերյալ ամփոփ վերագիր, որը Պատվիրատուն, համեմատելով իր ստացած փաստացի բաժանորդագրության, ինչպես նաև լրատվամիջոցների լույս ընծայման ժամկետների հետ, կամփոփի կատարված մատակարարումները: Վերջինիս արդյունքում կներկայացվի փոխադարձ հաշվարկի ակտ՝ երկկողմանի ստորագրման համար |
| 2 | 4 | Հայոց աշխարհ թերթ | |
| 3 | 5 | Հայկական ժամանակ թերթ | |
| 4 | 6 | Առավոտ թերթ | |
| 5 | 7 | Չորրորդ իշխանություն թերթ | |
| 6 | 10 | Ռեսպուբլիկա Արմենիյա թերթ | |
| 7 | 11 | Գոլոս Արմենիի թերթ | |
| 8 | 12 | Նովոյե վրեմյա թերթ | |
| 9 | 13 | Կրասնայա զվեզդա թերթ | |
| 10 | 14 | Նեզավիսիմոյե վոյեննոյե օբոզրենիե թերթ | |
| 11 | 16 | Տեխնիկա ի վոորուժենիյե ամսագիր | |
| 12 | 17 | Վոեննայա միսլ թերթ | |
| 13 | 18 | Հայ շինարարի տեղեկագիր թերթ | |
| 14 | 19 | Զարուբեժնոյե վոյեննոյե օբոզրենիե թերթ | |
| 15 | 20 | Ռադիո ամսագիր | |
| 16 | 21 | Ժողովուրդ թերթ | |
| 17 | 22 | Կրթություն թերթ | |
| 18 | 23 | Ավիացիա ի կոսմոնավտիկա ամսագիր | |
| 19 | 24 | Օրիենտիր ամսագիր | |
| 20 | 25 | 21-րդ դար ամսագիր | |
| 21 | 26 | Քրիստոնյա Հայաստան թերթ | |
| 22 | 28 | Արմեյսկի սբորնիկ ամսագիր | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

"Պրես Ստենդ" ՍՊԸ-ի

Տնօրեն

Է. ԽԱՆՁԱԴՅԱՆ

Հ/ա ... Է. Խանզադյան

Հ/Հ 00706900 8

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Չ/Հ | Անվանումը | Չ/մ | Քանակը | ընդհանուր գին | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | Ազգ թերթ | հատ | 30 | 312000 | ***ծառայության մատուցումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև համաձայնագրով նախատեսված ժամկետում:*** |
| 2 | 4 | Հայոց աշխարհ թերթ | հատ | 12 | 453600 | |
| 3 | 5 | Հայկական ժամանակ թերթ | հատ | 5 | 252000 | |
| 4 | 6 | Առավոտ թերթ | հատ | 8 | 403200 | |
| 5 | 7 | Չորրորդ իշխանություն թերթ | հատ | 4 | 41600 | |
| 6 | 10 | Ռեսպուբլիկա Արմենիա թերթ | հատ | 6 | 62400 | |
| 7 | 11 | Գոլոս Արմենիա թերթ | հատ | 18 | 421200 | |
| 8 | 12 | Նովոյե վրեմյա թերթ | հատ | 7 | 163800 | |
| 9 | 13 | Կրասնայա զվեզդա թերթ | հատ | 4 | 280800 | |
| 10 | 14 | Նեզավիսիմոյե վոյեննոյե օբոզրենիե թերթ | հատ | 7 | 196000 | |
| 11 | 16 | Տեխնիկա ի վոորուժենիյե ամսագիր | հատ | 2 | 84000 | |
| 12 | 17 | Վոեննայա միսլ թերթ | հատ | 6 | 201600 | |
| 13 | 18 | Հայ շինարարի տեղեկագիր թերթ | հատ | 1 | 24000 | |
| 14 | 19 | Զարուբեժնոյե վոյեննոյե օբոզրենիե թերթ | հատ | 12 | 302400 | |
| 15 | 20 | Ռադիո ամսագիր | հատ | 2 | 62400 | |
| 16 | 21 | Ժողովուրդ թերթ | հատ | 5 | 126000 | |
| 17 | 22 | Կրթություն թերթ | հատ | 4 | 41600 | |
| 18 | 23 | Ավիացիաի կոսմոնավտիկա ամսագիր | հատ | 2 | 81600 | |
| 19 | 24 | Օրիենտիր ամսագիր | հատ | 1 | 16800 | |
| 20 | 25 | 21-րդ դար ամսագիր | հատ | 1 | 36000 | |
| 21 | 26 | Քրիստոնյա Հայաստան թերթ | հատ | 28 | 101920 | |
| 22 | 28 | Արմեյսկի սբոռնիկ ամսագիր | հատ | 1 | 48000 | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

"Պրես Ստենդ" ՍՊԸ-ի

Տնօրեն

Է. ԽԱՆՋԱՂՅԱՆ

Հավելված N 2

N ԳՀԾՁԲ-12/1-1 պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Ծառայության անվանում | CPV կոդ | Վճարումը 2018թ. |
|---|---|---|---|
| 1 | Բաժանորդագրման ծառայություններ/Լրատվամիջոցների բաժանորդագրություն | 79981100/321/10/1 | Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿՆ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

"Պրես Ստենդ" ՍՊԸ-ի

Տնօրեն

Է. ԽԱՆԶԱԴՅԱՆ

**Հավելված N 3**

**N ԳՀԾՁԲ-12/1-1 պայմանագրի**

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________________ | ____________________________ |
| ____________________________ | ____________________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը __________________ |
| հհ __________________________ | հհ______________________________ |
| ____________________________ | _______________________________ |
| հվհհ ________________________ | հվհհ______________________________ |

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ___________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս _________________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս____________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________________ | ____________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________________ | ____________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 3.1**

**N ԳՀԾՁԲ-12/1-1 պայմանագրի**

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի

Պատվիրատուի անունը — Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________

պայմանագրի կնքման ամսաթիվը — պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն